Digitally signed by POGHOSYAN
NONA 6714830262
Date: 2023.01.26 09:52:50 AMT

# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ

# << ԱՐԱՄՈՒՍԻ Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

# ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>

# ՊՈԱԿ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ

# ԾՐԱԳԻՐ

2022-2023

# Ներածություն

2022-2033 ուս. տարում կազմակերպել և ղեկավարել սովորողների դաստիարակչական, աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը: Ապահովել հանրակրթական դպրոցի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցություն:

Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար: Ընդհանրացնել և միջոցներ է ձեռնարկել դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողների արդյունավետ, սահմանված կարգով երաշխավորված փորձը տարածելու համար: Աշխատանքներ տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը: Հսկողություն իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ: Կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ:

Կազմակերպել ու ղեկավարել սովորողների արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները:

# ԲԱԺԻՆ 1.    ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական այլ պիտույքներով: Առաջին դասարան հաճախող երեխաներին բաժանել պայուսակներ և գրենական պիտույքներ: (Լրացուցիչ կազմել ծնողազուրկ, սոցիալապես անապահով աշակերտների ցուցակ): | սեպտեմբեր | ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| 2 | Կատարել միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում: Ցուցակն ներկայացնել տնօրենին: | Սեպտեմբեր 1-ին 10օր | ՄԿԱԳ փոխտնօրեն, համայնքապետ | |
| 3 | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացողների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխարգելել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: | Տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| 4 | Ուշադրության կենտրոնում պահել չառաջադիմող աշակերտներին այն հաշվով, որ բոլորն էլ ընդգրկվեն դպրոց: | Տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն , դասղեկներ | |
| 5 | Աշխատանք տանել V-XII դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:<br>Ա) Անցկացնել նրանց հետ զրույց տարբեր թեմաներով,<br>Բ) Կազմակերպել  էքսկուրսիաներ,<br>Գ) Ուշադրություն դարձնել նրանց՝ արտադպրոցական դաստիարակությանը: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| 6 | Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, | Ու. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն , | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ամրապնդել ծնող-դպրոց կապը, ակտիվ համագործակցել դպրոցական ծնողական կոմիտեի հետ: Հիմնական աշխատանքները տանել ընտանիքների հետ: | | դասղեկներ | |
| 7 | Թույլ առաջադիմող աշակերտներին ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների ընդգրկել դպրոցական և արտադպրոցական, ակումբներում, սեկցիաներում: | Ու. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| 8 | Երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Բոլոր դասարաններում ստեղծել դասարանական անկյուններ՝ այնտեղ փակցնելով դպրոցի սովորողների ներքին կարգապահական կանոնները և աշակերտական խորհրդի կանոնադրությունը: | սեպտեմբեր | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |

## ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ, դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել I-XII դասարանների դասղեկների միավորումներ, պլանները ներկայացնել հաստատմանը՝<br>Ա) Տարրական դպրոցը՝ 01-04 սեպտեմբերի<br>Բ) Միջին դպրոցը՝ 06-09 սեպտեմբերի<br>Գ) Ավագ դպրոցը՝ 13-15 սեպտեմբերի: | Սեպտեմբերի 1-15 | ՄԿԱԳ փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Կատարել դասալսումներ միջին հաշվով շաբաթական 3 դասաժամ: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություններ, հանձնարարություններ: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Դասղեկական աշխատանք. | | | |
| Ա | Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները: Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| Բ | Դաստիարակության նպատակը. Համակողմանիորեն զարգացած, հայրենասիրություն, պետականություն և մարդասիրության ոգով դաստիարակված մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորում: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| Գ | Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվ ձևավորման նպատակին | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| Դ | Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: Ծնողների շրջանում անցկացնել բացատրական աշխատանքներ, աշակերտներին սովորեցնել ուսումնական տարվա ռեժիմին, համագործակցել համայնքի ամբուլատոր բուժ. հաստատության հետ՝ բացակայությունների քանակը վերահսկելու համար: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ե | Կիսամյակը մեկ-երկու անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով, ամուր հիմքի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական հետևյալ թեմաներով զեկուցումներ ՝<br>Ա) <<Ազգային դպրոց>>,<br>Բ) <<Ժամանակակից դպրոց>>,<br>Գ) <<Ընտանիքը և դպրոցը>>: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| Զ | Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնող-խորհուրդ բաղկացած 3-5 հոգուց: Ապահովել ծնող-խորհուրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Բոլոր դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից կազմել համադպրոցական ծնողական խորհուրդ: | Սեպտեմբերի 20-25 | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| 4 Ա | <u>Գեղագիտական դաստիարակություն.</u><br><br>Տանել հետևողական աշխատանք աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: Կազմակերպել այցելություն պատկերասրահներ: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| Բ | Դպրոցում ստեղծել  տնօրինությանը կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ՝ դրա կազմի մեջ ընդգրկելով նկարչության, երգի, գրականության, եկեղեցու պատմության և հասարակագիտության ուսուցիչներին: | Սեպտեմբեր | ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| Գ | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| 5 | <u>Ֆիզիկական դաստիարակություն.</u> | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա | Դպրոցական բուժքրոջ միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը: | Սեպտեմբեր | Ֆիզկուլտ. ուսուցիչներ, բուժքույր, ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| Բ | Անցկացնել միջդասարանական և միջդպրոցական մրցումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին, աշակերտներին: | Հոկտեմբեր-մայիս | Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| Գ | Կազմակերպել առողջության օր, դպրոց հրավիրել բժիշկների տարբեր մասնագիտությունների գծով, կազմակերպել զրույց, զեկուցումներ աշակերտների շրջանում: Յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում դասղեկական ժամերին կազմակերպել զրույց՝ նվիրված առողջությանը: Առողջության օր նշանակել ____________________ | Ուս. տարվա ընթացքում | Տնօրեն, ՄԿԱԳ փոխտնօրեն, դպրոցի բուժքույր | |
| Ա | <u>Ռազմահայրենասիրական դաստիարակություն.</u> Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: Կազմակերպել այցելություն Բալահովիտի զորամաս՝ աշակերտներին ծանոթացնելով զինվորների առօրյային և նրանց պայմաններին: | Ուս. տարվա ընթացքում | Զին. ղեկ Պատմության ուսուցիչներ, Շրջանի զինկոմիսարիատ ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| Բ | Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին: | Ուս. տարվա ընթացքում | Պատմության ուսուցիչներ, ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| Գ | Անցկացնել ,,Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում,, միջոցառում: Աշխատանք տանել ոչ ռազմականացված խմբավորումների հետ: Քաղաքացիական պաշտպանության օր սահմանել դեկտեմբերի 7-ը: | Ուս. տարվա ընթացքում | Զին. ղեկ, ՄԿԱԳ փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7Ա | Աշխատանքային դաստիարակություն.<br>Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը:<br>Դպրոց հրավիրել միջին մասնագիտական ուսումնական հաստատության ներկայացուցիչներին: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, ուսուցիչներ | |
| Բ | Դպրոցամերձ հողամասի մշակման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, արթնացնել սեր աշխատանքի նկատմամբ:<br>Պարբերաբար մաքրել դպրոցամերձ տարածքը, կատարել ծառատունկ: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, ուսուցիչներ | |
| Գ | Աշակերտների ուժով դպրոցում կազմակերպել աճեցվող ծաղիկների խնամքի գործ: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորվեն կաբինետները, միջանցքները և սրահները: Ստեղծել կանաչ անկյուն: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, կենսաբանության ուսուցիչներ | |
| 8 Ա | Գրադարանային աշխատանք<br>Օգնել գրադարանավարին կազմելու և տնօրենի հաստատմանը ներկայացնելու տարեկան աշխատանքների պլանը | Օգոստոս | Գրադարանավար, ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| Բ | Աշակերտներին բաժանորդագրել մանկապատանեկան <<Լապտերիկ>> ամսագրին և <<Լուսապսակ>> թերթին | Ուս. տարվա ընթացքում | Գրադարանավար, ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| 9 | Կազմակերպել ցերեկույթներ նվիրված տարվա ընթացքում հիշարժան հոբելյարներին, տոներին, համապետական նշանակության միջոցառումներին, տոների և հիշարժան հոբելյարների առիթով լույս ընծայել պատի թերթեր, հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից:<br>Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների | Ուս. տարվա ընթացքում | Գրադարանի վարիչ, ՄԿԱԳ փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ինքնակրթությանը և հոգևոր մտքի զարգացմանը (կազմել կիսամյակի և տարեկան միջոցառումների ցանկը և ներկայացնել տնօրենի հաստատմանը): | | | |

# ԲԱԺԻՆ 3. ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: | Սեպտեմբեր, կիսամյակների վերջում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| 2 | Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առաջ ծառացած համատեղ լուծման ենթակա հարցեր: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| 3 | Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների, զեկույցների թեմատիկ պլան՝ <<Ազգային դպրոց>>, <<Ընտանիքը և դպրոցը>>, <<Արդի դպրոց>> | Սեպտեմբեր | ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| 4 | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը ժամը $12^{00}$-ին հրավիրել ծնողական խորհուրդի նախագահների նիստ և ներկայացնել ու քննարկել դպրոցում առաջացած խնդիրները: | Սեպտեմբեր | ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ | |
| 5 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման բարելավման գործում: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| 6 | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին: | Ուս. տարվա ընթացքում | ՄԿԱԳ փոխտնօրեն | |

# ԲԱԺԻՆ 4. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում և ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն: | Մշտապես | ՄԿԱԳ փոխտնօրեն | |
| 2 | Նշանակել հերթապահներ, պահանջել հերթապահներից՝ <br>• Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքում: <br>• Կազմակերպել տվյալ օրվա ողջ գործընթացը: <br>• Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին: | Մշտապես | ՄԿԱԳ փոխտնօրեն, ավագ հերթապահներ | |
| 3 | Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները ըստ դպրոցական աշակերտական կանոնադրության: | Սեպտեմբեր | ՄԿԱԳ փոխտնօրեն | |

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. Նազարյան